

Արթուր Վաղարշյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու
պատմության ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆԱԲԱՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՌԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ (պատմության դասերի տեսական իմաստավորում)

Դատական իշխանության տեսության մեջ այդ իշխանությանը վերագրվում են հատկանիշներ, որոնցից բխում են նաև դատական իշխանության կազմակերպման սկզբունքները: Այդ հատկանիշներն են՝ դատական իշխանությունը պետական իշխանության տեսակ է, դատական իշխանությունը պատկանում է բացառապես դատարաններին, դատական իշխանության անօտարելի հատկանիշներն են անկախությունը, ինքնուրույնությունը և առանձնացվածությունը, դատական իշխանությունն ունի ենթաօրենսդրական բնույթ, դատական իշխանությունն իրականացվում է դատավարական (վարույթա-յին) կարգով, դատական իշխանության իրացման միասնական ձևը արդարադատությունն է¹: Բացի թվարկվածներից՝ գրականության մեջ առանձնացնում և տեսականորեն հիմնավորում են դատական իշխանության մի շարք այլ հատկանիշ-սկզբունքներ, օրինակ՝ դատական իշխանությունը պատկանում է միասնական դատական համակարգ կազմող դատարաններին. դատական իշխանությունն իրականացվում է դատավարական օրենքին խիստ համապատասխան, դատարանները համարվում են իրավապահպան մարմիններ, դատարանի լիազորությունները կրում են իշխանական բնույթ, դատարանի պահանջները և նրա որոշումների կատարումը ապահովվում են պետության ուժով²: Դատական իշխանության հատկանիշները հենց դրա կառուցման օրինաչափություն-սկզբունքներն են: Ինչպես տեսնում ենք, թվարկված հատկանիշ-օրինաչափությունների մեջ

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները, Եր., Երևանի պետ. համ. իրատ., 2006, էջ 37-40:

² Տե՛ս Судоустройство и правоохранительные органы в Российской Федерации. Под ред. В.И. Швецова. М., 1996, էջ 24-26, Магомедов А.М., Сергеев А.И., Швецов В.И., Судоустройство в Российской Федерации. Вып. 1. Под ред. В.И. Швецова. М., 1995, էջ 33-34:

չկա դատական իշխանության՝ մեր առաջարկած ինքնաբավության սկզբունքը: Այդ սկզբունքին մոտ որևէ դրույթ մենք չենք նկատում նաև դատական համակարգերի կառուցման դատարանակազմական սկզբունքների շարքում: Գրականության մեջ որպես այդպիսին են համարվում արդարադատության մատչելիությունը, դատարանի և դատավարության խնայողականությունը, արդարադատության արագությունը, դատարանների ինքնավերահսկողության անթույլատրելիությունը, դատական համակարգում վերահսկողության առկայությունը, միասնական դատական համակարգի օղակների միմյանցից անկախությունը, միասնականությունը, սահմանադրականությունը¹:

Այս հիմնախնդրի իմաստավորման համար անդրադառնանք Հայաստանի առաջին հանրապետության դատական շինարարության և դատական համակարգի գործունեության փորձին:

Հասարակական ծանր պայմանները, անընդհատ պատերազմական գործողությունները և դրա հետևանք հանդիսացող բնակչության անընդհատ տեղաշարժերը, փոխադրամիջոցների բացակայությունը կամ դրանց թանկությունը բացասաբար էին ազդում արդարադատության մարմինների գործունեության վրա: Դրա հետևանքը գործերի նախաքննության և դատական քննության ժամկետների ձգձգումն էր, դրանց կուտակումը քննիչների մոտ, դատարաններում: Անշուշտ, այս բնույթի օբյեկտիվ պայմանները, որոնք խանգարում էին արդարադատության գործընթացին և ընդհանրապես պետական բոլոր մարմինների գործունեության արդյունավետությանը, առկա էին, և դրանց դեմ հարկավոր էր երկարատև, համառ պայքար: Սակայն կային նաև սուբյեկտիվ պատճառներ, խոչընդոտներ, որոնք ունեին զուտ կազմակերպչական բնույթ, և որոնց վերացումը հնարավոր էր պետական բարձրագույն մարմինների, իշխող քաղաքական ուժերի ցանկության և ձեռնհաս մոտեցման դեպքում: Այդպիսի պատճառներից մեկն էլ ՆԳՆ կառուցվածքային օղակների և հատկապես վարչության ու միլիցիայի անպատրաստվածությունն ու անբարեխիղճ վերաբերմունքն էին իրենց պարտականությունների նկատմամբ ար-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահայան մարմինները, Եր., Երևանի պետ համ. հրատ., 2006, էջ 37-48, Судостроительство и правоохранительные органы в Российской Федерации. Под ред. В.И. Швецова. М., 1996, էջ 26-40, Магомедов А.М., Сергеев А.И., Швецов В.И., Судостроительство в Российской Федерации. Вып. 1. Под ред. В.И. Швецова. М., 1995, էջ 34-40:

դարադատության ոլորտում: ՆԳՆ-ն, հատկապես միլիցիան՝ որպես իրավապահպան համակարգի կարևոր օղակներից մեկը, այն գործադիր հենարանն էր, որի վրա իրենց առօրյա գործունեության մեջ հենվում էին ոչ միայն արդարադատության մարմինները, այլև պետական կառուցակարգի մյուս օղակները: Այդ մարմինների դերը ընդհանուր համակարգում այնքան էական էր, որ դրանց նույնիսկ չնչին անգործության դեպքում ամբողջ պետական կառույցը զրկվում էր արդյունավետ գործելու հնարավորությունից:

Ղատական համակարգի համար ներքին գործերի մարմինների մասն նշանակությունը հետևանք է օրենսդրական կարգավորման: Համաձայն «ՀՀ միլիցիայի մասին ժամանակավոր օրենքի»՝ միլիցիայի պարտականությունները «ղատական իշխանության նկատմամբ» հանգում էին հետևյալ գործողությունների՝

ա) քրեական դատավարության օրենքների համաձայն՝ քրեական գործերով նախնական հարց ու փորձին ու նախաքննությանը մասնակցել.

բ) օրենքի մատնանշած դեպքերում հանրային բնույթ ունեցող գործերում իբրև մեղադրող հանդես գալ.

գ) դատարանի պահանջով կանչված մեղադրյալներին և այլ անձանց դատարանին ներկայացնելը և նրանց կալանավորելը, եթե համապատասխան կարգադրություն կա.

դ) պատասխաններ տալու, որոշումներ լսելու և այլ պահանջների համար դատարանին ներկայանալու հրավիրելը, դատական վճիռներն ու որոշումները ի կատար ածելուն, ինչպես և դատավարության օրենքներում նախատեսված ուրիշ գործողություններին մասնակցելը.

ե) բանտարկյալներին տեղափոխելու վերահսկողությանը վերաբերող պարտականություններ կատարելը, որոնք հիշատակված են կալանավորներին վերաբերող կանոնադրության մեջ.

զ) իրեղեն ապացույցների պահպանությունը:

Ինչպես այս օրենքից, այնպես էլ «Քրեական դատավարության կանոնադրության» 377-386-րդ հոդվածներից բխում էր, որ դատական մարմինների արդյունավետ գործունեության, արդարադատության արագ և հաջող իրականացման հիմնական պայմաններից մեկն էլ միլիցիայի կողմից օրենքով սահմանված այս պարտականությունների ժամանակին, ճիշտ և բարեխիղճ կատարումն էր: Ավելին, իրավական այդ նորմերի ուժով միլիցիան վերածվել էր «դատական իշ-

խանության գործադիր մարմնի», առանց որի դատարանները, քննիչները, դատախազությունը անդամալուծվում, չեզոքացվում, անգործության էին մատնվում:

Ազբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միլիցիան իր պարտականությունները շատ անբարեխիղճ է կատարել, որի պատճառով թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական դատավարությունը և թե՛ ընդհանրապես հանցավորության դեմ պայքարը կրախի են մատնվել: Փաստաթղթերը փայլուն կերպով նկարագրում են այդ իրավիճակը, որը մնացել է անփոփոխ ամբողջ երկու և կես տարվա ընթացքում: Արդարադատության նախարարությունը անընդհատ ահազանգում էր այդ մասին կառավարությանը, ներքին գործերի նախարարին, պահանջում միջոցառումներ ձեռնարկել իրավիճակը բարելավելու համար:

Արդարադատության նախարար «ժողովրդական» Ս. Հարությունյանը 1919 թ. մարտի 26-ով թվագրված և ՆԽ-ին ուղղված զեկուցագրով պահանջում էր կառավարությունից անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել ցանկալի վարչություն և միլիցիա ստեղծելու համար՝ ելնելով պետական իշխանության հեղինակության պահպանման ու պետական կառույցների արդյունավետ գործունեության համար պայմաններ ստեղծելու կենսական անհրաժեշտությունից: Այդ փաստաթղթում գրված էր. *«Ինձ հանձնարարված արդարադատության նախարարության հիմնարկությունները և պաշտոնատար անձինք շատ հաճախ դիմում են ինձ՝ դիմումներով ու զանգատներով, որ իրենց գործունեությունը անդամալուծվում է ադիմինիստրացիայի և միլիցիայի չինովնիկների կողմից, որոնք լրիվ անտարբեր են ծանուցագրերը, դիմումները, փաստաթղթերի պատճենները հանձնելու, իրենց տրված հանձնարարությունների կատարման, մեղադրյալներին բերման ենթարկելու նկատմամբ, որի հետևանքով սկսված քննչական գործերը չեն շարժվում առաջ, իսկ դատական քննության նշանակված գործերը հետաձգվում են: Վարչության և միլիցիայի կազմում քիչ են նտավորական ուժերը, քիչ են ծառայությանը փորձված անձինք, քիչ են պետական ծառայության համար պատրաստված գործիչները, վերջապես չկա ստորին մարմինների՝ վերադասների առջև փաստական պատասխանատվության օրգանական կապ. չկա մեզ մոտ նաև մեկ կետը մյուսի հետ կապող ճիշտ կառուցված հաղորդակցություն, չկան փոխադրամիջոցներ, որի*

հետևանքով տեղաշարժվելու ծառայական անհրաժեշտություն ունեցող պաշտոնյաները գրկված են այդ հնարավորությունից, մինչդեռ այդ բոլոր հարցերը և դրանց լուծումը մտնում են ՆԳՆ-ի ուղղակի պարտականությունների մեջ նրան ենթակա մարմինների հետ ... Շնորհիվ այն բանի, որ մեզ մոտ չկա լավ վարչություն և միլիցիա, գավառամասերում, և նույնիսկ բուն Հայաստանի մայրաքաղաքում՝ Երևան քաղաքում չկա կյանքի և գույքի անվտանգություն, թագավորում է անարխիան բոլոր տեսակի բռնություններով, որից ուժեղ տառապում է ժողովուրդը և քայքայվում է նրա տնտեսությունը»:

Մեկ ուրիշ փաստաթղթում, որ կազմել է արդարադատության նախարարը 1920 թ. փետրվարին, և որով նա դիմում է արդեն անմիջականորեն ՆԳ նախարարին, գրված է. «Քննիչները և դատարանները, որոնցից ես բացատրություն էի պահանջել, թե ինչու դատավարությունը այնքան դանդաղ է կատարվում, տեղեկացնում են ինձ, որ միլիցիան մեծապես թերանում է իր պարտականությունները ըմբռնելու և կատարելու մեջ՝ հանդեպ դատաստանական գործունեության: Բազմաթիվ գործեր ուշ են ավարտվում, որովհետև միլիցիան ուշ է հայտնում քննիչներին տեղի ունեցած հանցանքների մասին: Իսկ ժամանակին սկսված գործերը չեն կարող արագ և նորմալ ընթացք ստանալ, որովհետև միլիցիան հաճախ չգիտե կանոնավոր հետաքննություն կատարել, ցույց չի տալիս անհրաժեշտ աջակցություն քննիչներին հանցանքների հետքերը պահպանելու, հանցագործներին հետապնդելու, ձերբակալելու և վկաներին ծանուցագիր հանձնելու ու հանձնման մասին հաղորդելու քննիչներին: Նույնպիսի գանգատներ են անում դատարանները: Բազմաթիվ գործեր, որոնք նշանակված են լինում ունկնդրության համար, դատարանները ստիպված են հետաձգել, որովհետև ծանուցագրերը հանձնված չեն լինում վկաներին և դատարան կանչված այլ անձերին, կամ եթե հանձնված են լինում, հանձնման մասին ոչ մի տեղեկություն չեն տրվում դատարաններին: Այս մասին հաղորդելով Ձեզ ի գիտություն խնդրում եմ ամենալուրջ ուշադրություն դարձնել, որպեսզի այսուհետև միլիցիան ավելի բարեխիղճ կատարի իր պարտականությունները...»:

Չնայած այս ամենին՝ դիմումներին, գանգատներին, բողոքներին, ձեռնարկված կիսամիջոցներին, ինչպես երևում է 1920 թ. դեկտ. 2-ին Երևանի շրջանային դատարանի նախագահի արդարադատության նախարարին ներկայացրած զեկուցագրից, վիճակը այնուամեն

նայնիվ մնաց անփոփոխ¹:

ՆԳՆ տեղական մարմինները ոչ միայն ակտիվորեն չէին օժանդակում քննիչներին և դատարաններին, այլև բանը հասել էր նրան, որ տեղերում նրանք դուրս էին եկել միմյանց դեմ՝ իսկական հակամարտության վերածելով օրինական համագործակցությունը պետական կառուցակարգի ամբողջական համակարգում: Իսկ վերին աստիճանների մակարդակում այդպիսի դիրքորոշումը անընդհատ հանգեցնում էր փոխադարձ մեղադրանքների, որոնցում, իհարկե, գերազացում էին արդարադատության նախարարության բողոքները ՆԳՆ-ի գործունեությունից: Ահա թե ինչ է գրում դատական պալատի դատախազը արդարադատության նախարարին 1920 թ. հունիսի 26-ին թվագրված գեկուցագրերից մեկում. «*Ինքնավարությունները և ադմինիստրացիան խառնվում են դատական գործերին: Օրինակ՝ Էջմիածնի ինքնավարության նախագահը իր ստորադրյալ ադմինստրացիայի միջոցով առաջին գավառամասի քննիչի որոշումը փոխում է: Քննիչը 2 եզրույթով կերպով հանձնել է մեկին: Բոլորովին անհասկանալի կերպով այդ եզրերը հիշված նախագահի կարգադրությամբ առնվում են այդ մարդուց և հանձնվում են ուրիշին: Նախագահի դեմ սկսված է քրեական հետապնդում 330-րդ հոդվ. համաձայն... Կարելի է ավելի շատ օրինակներ բերել, բայց այդքանը բավական է բնորոշելու համար այն մթնոլորտը, որի մեջ գործում են մեր քննիչները»:*

Արդարադատության նախարարության ձեռնարկած միջոցառումները, դիմումներն ու խնդրագրերը ՆԳՆ, կառավարություն արդյունք չտվեցին, և գործը տեղից չշարժվեց: Նախարարությունը ստիպված գնաց ավելի կոնկրետ քայլերի՝ այս անգամ արդեն օգտագործելով իր օրենսդրական նախաձեռնության իրավունքը կառավարությունում: 1920 թ. ամռանը նախարարությունը կառավարությանն առաջարկում էր հիմնել «Դատառատիկանական կուրսեր» միլիցիայի աշխատակիցների պատրաստման և վերապատրաստման համար²: Այդ միջոցառման նախաձեռնությունը 1919 թ. վերջին ելնում էր դատական պալատի դատախազից, որը մշակել էր նաև այդ «կուրսերի» կանոնադրությունը և հիմնադրման նախագիծը³: Նախարարության

¹ Տե՛ս ԴԴ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 107, թ. 354:

² Տե՛ս ԴԴ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 16, թթ. 369-371:

³ Տե՛ս ԴԴ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 134, թթ. 94-96:

ջանքերով հրատարակվել էր նաև հատուկ գործնական ձեռնարկ «Քրեական գործեր քննելիս միլիցիայի գործողությունները» վերտառությամբ: Արդարադատության նախարարությունը կենսագործել կամ նախաձեռնել է բազմաթիվ այլ միջոցառումներ, այդ թվում նաև առաջարկը՝ միլիցիան տեղական ինքնավարությունների տնօրինությունից հանել և հանձնել ներքին գործերի նախարարությանը¹:

Տեսնելով, որ ձեռնարկված միջոցառումները արդյունք չեն տալիս, արդարադատության նախարարությունը «այդ չարիքը գեթ մասամբ վերացնելու համար անհրաժեշտ է գտնում ծանուցագրերի հանձնումը քաղաքներում ժամանակավորապես դնել դատական կատարածությունների և ցրիչների վրա»: Այս առաջարկով՝ համապատասխան օրինագծով հանդերձ արդարադատության նախարարությունը մտավ օրենսդիր լիազորություններով օժտված ՆԽ, որը 1920 թ. հոկտ. 26-ին ընդունեց օրենք «Քրեական գործերով ծանուցագրերի հանձնման մասին»: Իհարկե, սա կիսամիջոց էր և արդեն ուշացած, որովհետև հանրապետության գոյությանը մնացել էր ընդամենը մեկ ամիս ժամանակ: Պարզ է, որ այդ քայլն իսկապես անհրաժեշտ էր, և դա պետք է իրականացվեր ավելի վաղ: Սակայն անհասկանալի է թվում այն, թե ինչու հենց միայն քաղաքներում և միայն քրեական գործերով: Պատճառը երևի գերատեսչական շահերն էին և մտածողությունը՝ գերատեսչականությունը: Հեշտ էր անընդհատ ներքին գործերի նախարարությանը և միլիցիային մեղադրել, բայց նրա վիճակն էլ կարելի էր հասկանալ, իհարկե, որոշ վերապահումներով: Ահա թե ինչ է պատասխանում ՆԳՆ վարչության և միլիցիայի տեսուչը արդարադատության նախարարության «դիմում-բողոքներից» մեկին՝ 1920 թ. մարտի 20-ին. *«Էջմիածնի գավառական կոմիսարը իր տրամադրության տակ ամբողջ այդ շրջանի համար ունի միայն 243 միլիցոներ՝ ցրված և այդպիսի չնչին ուժով գավառական կոմիսարը հնարավորությունից զուրկ է բացարձակ կռիվ հայտնելու նույն գավառում ապրող ամբողջ նուխեցի, արեշցի և ուրիշ գաղթականներից, որոնք ավելի լավ են զինված, ավելի լավ կազմակերպված և ավելի ուժեղ, քան գավառական միլիցիան: Այդ շրջանի ընթուստ գաղթականությունը, մի շարք չարագործություններ կատարելով և անպատիժ մնալով, ավելի է լկտիացել, չի ճանաչում տեղի իշխանությանը և,*

¹ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 134, թ. 99:

ինչպես վերևը հիշեցի, ադմինիստրացիան, անկարող լինելով իր տրամադրության տակ ունեցած ուժով կռվել 2000 լավ զինված գաղթականության դեմ, դիմել է կառավարությանը՝ խնդրելով կամ զինաթափ անել այդ շրջանի գաղթականությանը կամ ընդունել ադմինիստրացիայի ամբողջ կազմի հրաժարականը»:

Այդպիսի պայմաններում ով էլ որ լիներ, օրինակ, ծանուցագրերի հանձնողը, կամ մեղադրյալին ձերբակալողը, իհարկե, կոժվարանար: Արդարադատության նախարարությունում այդ փաստը լավ էին հասկանում, և ամենայն հավանականությամբ հենց դա էլ պայմանավորել է առաջարկությունը՝ ծանուցագրերի հանձնումը տալ դատական կատարածուներին և ցրիչներին միայն քաղաքում, որովհետև այստեղ, իհարկե, կառավարությունը վերահսկում էր իրավիճակը: Հակառակ դեպքում, արդարադատության նախարարությունը ևս հայտնվելու էր ՆԳՆ-ի վիճակում, և այդ ժամանակ չէր լինի քավության նոխազ:

Չկար անկողմնակալ, մտածված ու համակարգված մոտեցում հիմնահարցերի նկատմամբ, այլ միայն կաղապարված, բյուրոկրատական վերաբերմունք, օրինակ՝ անընդհատ դիմում էին ՆԳՆ-ին, որ շրջաբերական ուղարկի տեղերին, որպեսզի կատարեն իրենց պարտականությունները: Բայց անհրաժեշտ էր ստեղծել, ինչու չէ, նաև հատուկ հետախուզական և գործադիր միլիցիա ներքին գործերի նախարարության միլիցիայի հաստիքների կրճատման հաշվին, և արդարադատության մարմինները դուրս կգային իրենց չեզոքացված ու անդամալուծված վիճակից, կդառնային գործուն պետական մարմիններ:

Առաջին հանրապետության դատական համակարգի գործունեության բարձրացված հիմնահարցերը ցույց են տալիս, որ պետական կառուցակարգում դատական մարմինները վերածվել էին գործադիր մարմինների քնահաճույքներից կախված, կառավարչական ապարատի հետևից քարշ եկող կառուցակարգի: Այդ գործընթացների տեսական իմաստավորումը հիմք է տալիս առաջ քաշելու դատական իշխանության կազմակերպման և գործունեության նոր սկզբունք՝ **գործառությանին ինքնաբավությունը**, որի բովանդակությունը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով. դատական իշխանությունն իր ներհամակարգային բոլոր խնդիրների, գործառույթների, լիազորությունների իրականացման հարցում պետք է լինի ինք-

նաբավ, արտահամակարգային պետական կառույցներից անկախ: Դա նշանակում է, որ բոլոր ներհամակարգային գործառույթներն ու լիազորությունները, հատկապես արդարադատության իրականացման կազմակերպական-ապահովող-օժանդակող լիազորությունները պետք է կատարվեն ներհամակարգային ապահովող ու օժանդակող կառավարչական կառույցների ու ռեսուրսների միջոցով: Այդ լիազորությունների վերապահումն արտահամակարգային կառույցներին որոշակի իրավիճակներում միջգերատեսչական մրցակցության ու հակամարտության և նույնիսկ քաղաքական պատճառներով կարող է չեզոքացնել համակարգի գործունեությունը, արտաքուստ անկախ, ինքնավար համակարգին դնել լրիվ կախվածության մեջ:

Artur Vagharshyan

*Head of the YSU Chair of Theory and History of State and Law,
Candidate of Legal Sciences, Docent*

**FUNCTIONAL SELF-SUFFICIENCY AS AN ORGANIZATIONAL AND
FUNCTIONAL PRINCIPLE OF THE JUDICIAL AUTHORITY**

(Theoretical comprehension of the lessons from the history)

The issues raised by the activity of the judicial authority of the First Republic show that the judicial bodies became a mechanism following the governmental machine and depending from the executive authorities' caprice. The theoretical comprehension of those processes gives us a basis to propose a new principle of organization and functioning of the judicial authority – **functional self-sufficiency**, the content of which can be conceived by the following formula: the judicial authority must be self-sufficient in the realization of all its internal problems, functions, capacities, and independent - from external state structures. It means that all internal functions and capacities, especially - the organizational-ensuring-facilitating authorities must be implemented through internal ensuring and facilitating management structures and resources. By giving those authorities to external structures the activity of the system may be neutralized because of interagency competition and antagonism, and even political reasons in some cases, the externally independent, self-governing system may be put into dependency.